

## **ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդների համաշխարհային օրվա կապակցությամբ**

Սիրելի՛ երիտասարդներ

Արդեն 70 տարի է՝ նոյեմբերի 10-ը նշվում է որպես Երիտասարդության համաշխարհային օր՝ իր խորհրդով միավորելով մարդկության ամենախանդավառ և նորարար հատվածին:

Ուրախությամբ պետք է նշեմ, որ մեր երկրի երիտասարդությունը գործուն և արդյունավետ կերպով մասնակցում է հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի բոլոր կարևոր գործընթացներին, մեծապես նաև մեր հայրենիքի պաշտպանությանն ու անվտանգության ապահովմանը:

Հայ երիտասարդներն ակտիվ են նաև միջազգային հարթակներում, միջազգային երիտասարդական ծրագրերում՝ իրենց ավանդը բերելով առաջադեմ մարդկության՝ ավելի լավ աշխարհ կերտելու ջանքերին:

Շնորհավորելով Երիտասարդության համաշխարհային օրվա առիթով՝ հավաստիացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության երիտասարդական պետական քաղաքականությունն ուղղված է ձեր խնդիրների լուծմանը, ձեր ինքնահաստատման, կայացման և զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Մաղթում եմ ձեզ ուժ, եռանդ և խանդավառություն՝ արագ փոփոխվող ժամանակակից աշխարհում ձեր տեղը գտնելու և ձեր լավագույն նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:

**10.11.2015 թ.**